Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

https://grqaser.org/hy/donate

Ստուգված
Բրիտանական գրականություն, Արձակ, Հեքիաթ, Մանկական գրականություն
9+
Թարգմանիչ՝ Գ. Հախվերդյան

Օսկար Ուայլդ
Եսամոլ հսկան

Ամեն օր, դպրոցից տուն դառնալիս, երեխաները մտնում էին Հսկայի այգին խաղալու: Դա մեծ ու գեղեցիկ մի այգի էր՝ փափուկ կանաչ խոտով: Այս ու այնտեղ խոտերի միջից երևում էին աստղանման հիասքանչ ծաղիկներ, կային և տասներկու ծիրանենիներ, որոնք գարնանը մարգարտավարդագույն ծաղիկներով էին ծածկվում, իսկ աշնանը՝ հարուստ՝ բերք տալիս: Թռչնակները թառում էին ծառերին և երգում այնքան ախորժալուր, որ երեխաները խաղերը մոռացած նրանց էին լսում:

— Որքա՜ն ուրախ է այստեղ, — ձայն էին տալիս նրանք միմյանց:

Բայց մի օր Հսկան տուն վերադարձավ: Նա հյուր էր գնացել իր ընկերոջ՝ Կորնուելի մարդակերի մոտ ու յոթ տարի այնտեղ մնացել: Եվ, քանի որ խոսելիքը սահմանափակ էր եղել, նա յոթ տարում ասել էր այն ամենը, ինչ պիտի ասեր, իսկ հետո որոշել էր սեփական ամրոցը վերադառնալ:

Երբ նա տեղ հասավ, տեսավ իր այգում խաղացող մանուկներին:

— Ի՞նչ գործ ունեք այստեղ, — գոռաց նա զարհուրելի ձայնով, ու երեխաները փախան:

— Իմ այգին իմ սեփականությունն է, — գոչեց Հսկան, — և թող բոլորն իմանան, որ բացի ինձնից, ոչ ոքի թույլ չեմ տա այստեղ խաղալ:

— Եվ նա բարձր պարիսպ կանգնեցրեց այգու չորս կողմն ու ցուցանակ կախեց.

ՄՈՒՏՔՆ ԱՐԳԵԼՎԱԾ Է:
ՕՐԻՆԱՉԱՆՑՆԵՐԸ ԿՊԱՏԺՎԵՆ:

Շատ եսամոլն էր այդ Հսկան:

Աղքատ երեխաները այլևս խաղալու տեղ չունեին: Նրանք փորձեցին խաղալ ճանապարհին, բայց այնտեղ չափազանց փոշոտ ու քարաշատ էր, և դա նրանց դուր

չեկավ: Այժմ արդեն, դասերից հետո, նրանք թափառում էին բարձր պարսպի շուրջն ու զրուցում՝ հոյակապ այգու մասին, որը չէր երևում:

— Ինչքա՜ն ուրախ էինք մենք այգում, — ասում էին նրանք միմյանց:

Հետո եկավ գարունը, և ամենուրեք փոքրիկ բողբոջներ ու թռչնակներ հայտնվեցին: Միայն Եսամոլ Հսկայի այգում տնօրինում էր Ձմեռը: Թռչնակներն այնտեղ չէին ուզում երգել, քանի որ մանուկներ չկային, իսկ ծառերն էլ մոռացան ծաղկել: Օրերից մի օր խոտերի միջից մի գեղեցիկ ծաղիկ հանկարծ գլուխը հանեց, բայց հենց որ նկատեց ցուցանակը, այնքան վշտացավ երեխաների համար, որ իսկույն նորից թաքնվեց հողի տակ ու քուն մտավ: Միայն Ձյունն ու Սառնամանիքն էին իրենց լավ զգում:

— Գարունը մոռացել է գալ այս այգին, — գոչեցին նրանք, — ուստի մենք կլոր տարին այստեղ կապրենք:

Ձյունը խոտը ծածկեց իր հսկա ճերմակ թիկնոցով, իսկ Սառնամանիքն արծաթազօծեց բոլոր ծառերը: Հետո նրանք իրենց մոտ հրավիրեցին Հյուսիսային Քամուն, ու նա եկավ: Մորթիներով փաթաթված, նա ամբողջ օրը ոռնում էր այգում և տեղահան անում ծխնելույզների խողովակները:

— Ի՜նչ փառահեղ վայր է, — ասում էր Հյուսիսային Քամին, — պետք է այստեղ հրավիրել նաև Կարկուտին:

Ու Կարկուտը եկավ: Օրը երեք ժամ նա հարվածում էր ամրոցի տանիքին, մինչև որ կոտրատեց համարյա բոլոր կղմինդրները, իսկ հետո, հնարավորին չափ արագ, պտտվեց այգու շուրջբոլորը: Նրա զգեստը մոխրագույն էր, իսկ շունչը՝ սառույց:

— Չեմ հասկանում, ինչո՞ւ է այսքան ուշանում Գարունը, — ասաց պատուհանի գոգին նստած Եսամոլ Հսկան և նայեց իր սառած սպիտակ այգուն: — Հուսով եմ, եղանակը շուտով կփոխվի:

Բայց Գարունն այդպես էլ չեկավ: Չեկավ և Ամառը: Աշունը ոսկե մրգեր բերեց բոլոր այգիներին, իսկ Հսկայի այգուն՝ ոչինչ:

— Նա չափազանց եսամոլ է, — ասաց Աշունը:

Եվ այդպես, Հսկայի այգում մշտապես Ձմեռն էր թագավորում, իսկ Հյուսիսային Քամին, Կարկուտը, Ձյունն ու Սառնամանիքը պարում էին ծառերի միջին:

Մի առավոտ, երբ Հսկան արթուն պառկած էր անկողնում, նրա ականջին գեղեցիկ մեղեդի հասավ: Ու այնպես ախորժալուր, որ նա կարծեց, թե Արքայի երաժիշտներն են անցնում: Իրականում դա մի փոքրիկ կանեփահավ էր ճռվողում, բայց Հսկան այնքան վաղուց չէր լսել իր այգում երգող թռչնակի, որ նրան թվաց, թե աշխարհում երբեք ավելի սքանչելի բան չի լսել: Կարկուտը դադարեց ծեծել տանիքը, իսկ Հյուսիսային Քամին այլևս չոռնաց, ու դրա փոխարեն կիսաբաց պատուհանից անուշ բուրմունք թափանցեց ներս:

— Վերջապես գարունը եկավ, — ասաց Հսկան ու անկողնուց վեր թռավ:

Եվ ի՞նչ տեսավ:

Նրա առջև հրաշալի տեսարան բացվեց: Պարսպի մեջ բացված նեղ անցքից խուժած մանուկները թառել էին ծառերի ճյուղերին: Ամեն մի ծառի մի երեխա էր նստած: Ու ծառերն այնքան ուրախ էին մանուկների վերադարձի համար, որ ոտից գլուխ ծաղիկ էին հագել և ձեռքերն էին օրորում նրանց գլխավերևը: Շուրջբոլորը թռչուններ էին ճախրում և հրճվալից ծլվլում, իսկ ծաղիկները գլուխները կանաչ խոտերի միջից հանած, ծիծաղում էին: Իսկապես, չքնաղ տեսարան էր: Միայն մի անկյունում էր, որ դեռ իշխում էր Ձմեռը: Դա այգու ամենահեռավոր անկյունն էր, որտեղ մի մանչուկ էր կանգնած: Նա այնքան փոքր էր, որ չէր հասնում ծառի ճյուղերին և դառն արցունք էր թափում ու պտտվում ծառի շուրջը: Խեղճ ծառը եղյամով ձյունով էր պատած, իսկ Հյուսիսային Քամին շարունակում էր փչել ու ոռնալ նրա գլխավերևը:

— Մագլցի՛ր, մանչուկ, — ասում էր ծառը ու կքում ճյուղերը, որքան կարող էր: Բայց տղան շատ էր պստիկ:

Ու Հսկայի սիրտը հալվեց այս տեսարանից:

— Ի՜նչ եսամոլն եմ եղել, — մտածեց նա, — ա՛յ թե ինչու չէր գալիս Գարունը: Ես մանչուկին կնստեցնեմ ծառի կատարին և կքանդեմ պարիսպն ու իմ այգին խաղահրապարակ կդարձնեմ բոլոր, բոլոր երեխաների համար:

Նա իսկապես շատ էր զղջում իր՝ վարմունքի համար:

Եվ Հսկան մատների ծայրերի վրա իջավ ցած, բացեց դուռն ու այգի մտավ: Բայց երեխաները նրան տեսնելով այնպես ահաբեկվեցին, որ ամեն մեկը մի կողմ փախավ, ու կրկին եկավ Ձմեռը: Միայն մանչուկը չփախավ, քանի որ նրա աչքերն արտասուքով էին լցված և նա նույնիսկ չնկատեց Հսկայի մուտքը: Հսկան թիկունքից անշշուկ մոտեցավ տղային, քնքշորեն ափն առավ նրան նստեցրեց ծառին: Ծառն իսկույն ծաղկեց, և թռչնակները ետ դարձան ու ծլվլացին, իսկ մանչուկը ձեռքերը երկարեց, գրկեց Հսկայի վիզն ու համբուրեց նրան: Մյուս մանուկները, երբ տեսան, որ Հսկան բարի է դարձել, ետ վազեցին, և Գարունն էլ վերադարձավ նրանց հետ:

— Այսուհետև սա ձեր այգին է, փոքրիկներ, — ասաց Հսկան, մի մեծ կացին առավ ու խորտակեց պարիսպը: Կեսօրին, երբ մարդիկ շուկա էին գնում, Հսկային տեսան երեխաների հետ խաղալիս աշխարհիս ամենագեղեցիկ այգում:

Մանուկները խաղացին մինչև երեկո, իսկ հետո եկան բարի գիշեր մաղթելու Հսկային:

— Իսկ ո՞ւր է ձեր փոքրիկ ընկերը, որին ես ծառը բարձրացրի, — հարցրեց Հսկան:

Նա այդ տղային բոլորից շատ էր սիրում, քանի որ մանչուկը համբուրել էր նրան:

— Չգիտենք, — պատասխանեցին երեխաները, — նա գնացել է:

— Ասացեք նրան, որ վաղն անպայման գա, — խնդրեց Հսկան:

Բայց երեխաներն ասացին, որ չգիտեն, թե որտեղ է ապրում տղան, քանի որ նախկինում երբեք չեն տեսել նրան: Ու Հսկան շատ վշտացավ:

Ամեն օր, դասերից հետո, մանուկները գալիս ու խաղում էին Հսկայի հետ: Իսկ փոքրիկ տղան, որին Հսկան ամենից ավելի էր սիրում, այդպես էլ չէր երևում: Հսկան բոլոր երեխաներին էլ շատ լավ էր վերաբերվում, բայց և այնպես, շատ էր կարոտում իր առաջին փոքրիկ բարեկամին ու հաճախ հարցուփորձ էր անում նրա մասին:

— Որքա՜ն կուզենայի նրան կրկին տեսնել, — ասում էր Հսկան:

Տարիներն անցնում էին, և Հսկան ավելի ու ավելի էր ծերանում ու թուլանում: Նա այլևս մանուկների հետ խաղալու ուժ չուներ, այնպես որ նստում էր բազկաթոռում և նայում, թե ինչպես են խաղում երեխաներն ու հիանում էր իր այգով:

— Ես սքանչելի ծաղիկներ շատ ունեմ, — ասում էր նա, — բայց երեխաներն ամենասքանչելին են:

Ձմռան մի առավոտ, հագնվելիս, Հսկան դուրս նայեց պատուհանից: Այժմ արդեն նա չէր ատում Ձմեռը, քանի որ գիտեր, որ Գարունը պարզապես քուն է մտել, իսկ ծաղիկները՝ հանգստանում են:

Հանկարծ Հսկան աչքերը սկսեց տրորել, նայել ու նայել, կարծես հրաշք տեսած լիներ: Եվ, իսկապես, հրաշալի տեսարան էր բացվել: Այգու ամենահեռավոր անկյունում մի ծառ ամբողջովին ծաղկել էր ու ծածկվել չնաշխարհիկ սպիտակ ծաղիկներով: Ծառի ճյուղերը ոսկուց էին և նրանցից կախված էին արծաթե մրգեր, իսկ նրանց տակ կանգնած էր տղան, ում Հսկան ամենից շատ էր սիրում:

Ուրախությունից իրեն կորցրած, Հսկան ցած վազեց աստիճաններով ու այգի մտավ: Նա ուղղակի խոտերի վրայով շտապեց դեպի տղան: Բայց երբ մոտեցավ, նրա դեմքը շառագունեց զայրույթից ու հարցրեց.

— Ո՞վ է հանդգնել քեզ վիրավորել:

Տղայի ափերի մեջ նա տեսել էր երկու մեխի հետք, երկու մեխի հետք էլ ոտքերին կար:

— Ո՞վ է հանդգնել վիրավորել քեզ, — գոչեց Հսկան, — ասա, որպեսզի առնեմ մեծ թուրս ու սպանեմ մեղավորին:

— Ոչ, — պատասխանեց մանուկը: — Չէ՞ որ սրանք Սիրո վերքեր են:

— Ո՞վ ես դու, — հարցրեց Հսկան ու մի խորհրդավոր երկյուղ պատեց նրան, և նա ծնկի իջավ մանկան առաջ:

Մանուկը ժպտաց Հսկային ու ասաց.

— Մի օր դու ինձ թույլ տվիր խաղալ քո այգում, իսկ այսօր ես քեզ կտանեմ իմ այգին, որ կոչվում է Դրախտ:

Ու այդ օրը, երբ երեխաները ներս վազեցին այգի, նրանք Հսկային անշնչացած գտան. նա պառկած էր սպիտակ ծաղիկներով ծածկված ծառի տակ: